Վահան Թոթովենց

Գարունին հետ

Քո՛ւյր, փոխե շորերս և անկողնիս ճերմակները…

Մաքրե՛ տունը և միջանցքին մեջ ծաղիկներ ցանե՛…
Բա՛ց լուսամուտը, թո՛ղ Գարունը ներս մտնե…

Ըրե՛ այնպես, ինչպես մայրիկը կըներ:

Այս իրիկուն անիկա ինձ պիտի այցելե:

Ես կը բաղձամ ողջունել զինքը, ինչպես նոր Կյանք մը, ճերմա՛կ, մաքո՛ւր շորերով և գարնան թարմությամբ:

Իմ ժպիտը դալկահար շրթներուս վրա կարմիր վարդերու փրփուրին կը նման՞ի, քո՛ւյր . . .

Իրիկուն է:

Վառե՛ ճրագը և տանը մեծ դուռը բաց թող.

Ես մայրիկին պիտի հանդիպիմ ճերմա՛կ, մաքո՛ւր շորերով և երիտասարդ թարմությամբ:

Արդեն մաքրած ես տունը և շորերս ու անկողնիս ճերմակները փոխած:

Ճրագը մեղմիկ կը հևա, աստղիկ կա սենյակիս մեջ…

Հոս մի՛ կենար, քո՛ւյր: Գնա՛ դուրս և Գարունին հետ խոսիր՛

Կյանքի և Արևի մասին:

1917 թ.

****

Ես սիրեցի այս կյանքին բոլոր բաները, ատեցի, երգեցի և հարբեցա:

Ուրախացա մութին մեջ, ըմբոշխնեցի տրտմությունն անգամ:

Պատահեցա ամեն կարգի մարդոց, ընկերացա բոլորին հետ և մտա անոնց հոգիներուն մեջ:

Ես ծունկի եկա քարերու վրա, աղոթեցի Աստուծո ու հայհոյեցի անոր:

Ես լսեցի աշխարհին խոսքը և տեսա գործը:

Հիմա պատրաստ եմ ես մահվան:

Ես պատրաստ եմ սկսելու ուրիշ կյանք մը, դարձյալ այնքան ամբողջությամբ ապրելու, որքան այս կյանքը ապրեցա:

Ո՛չ ծաղիկներ կըտանիմ հետս և ո՛չ ալ խորհուրդ մը այս արևներեն: Կերթամ մերկ և դատարկ ձեռքերով, որպեսզի հոն սկսիմ կառուցանել և ստեղծել:

Ես ապրեցա միայն այս աշխարհին համար:

Կը թողում ամեն ինչ ա՛յստեղ: